

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2015թ-ի նոյեմբերի 18-ին կայացած
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում / ամբիոնի վարիչներ/:
2. Հաղորդում հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի կատարման մասին / հոգեբանություն մասնագիտությամբ մագիստրոսական ծրագրերի ղեկավարներ/:
3. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և ղեկավարների հաստատում:
4. Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության, որակավորման քննությունների հարցաշարերի վերանայման, մագիստրոսական ծրագրերի արդիականացման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ասպիրանտների մինիմումների և քննությունների փոփոխությունների մասին հարցը:

Ամբիոնի վարիչներ՝ Ա.Մանասյանը, Մ.Զաքարյանը, Գ.Շահվերդյանը , Ն.Խաչատրյանը, Է.Հարությունը ներկայացրեցին իենց ամբիոնների աշխատանքներն այդ ուղղությամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

2. Լսեցին՝ Հեռակա ուսուցմամբ մագիստրոսական թեզերի կատարման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Մագիստրոսական ծրագրերի ղեկավարներ Է. Զաքարյանը, Վ.Միքայելյանը, Հ.Ավանեսյանը ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները: Ուսանողների հետ պարբերական հանդիպումներ են անցկացվում, հետևում թեզերի ընթացքին:

Որոշեցին՝ Կատարված աշխատանքները համարել դրական:

3. Լսեցին՝ Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց ամբիոնների կողմից առաջարկված թեմաները և ղեկավարներին:

Որոշեցին՝ Հաստատել ամբիոնների կողմից ներկայացրած ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաներն ու առաջարկված ղեկավարներին:

4. Լսեցին՝ Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության, որակավորման քննությունների հարցաշարերի վերանայման հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա.Բաղդասարյանը ամբիոնի վարիչներին հանձնարարեց ներկայացնել թարմացված հարցաշարերը:

Որոշեցին՝ Մեկ ամսից ներկայացնել նոր հարցաշարերը:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան